Առողջապահության նախարարություն
Ministry of Health of the Republic of Armenia

Ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

ԿՐԾՔԱԳԵՂՁԻ ՔԱՂՑԿԵՂԻ ՍՔՐԻՆԻՆԳԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ԻՆՉ Է ԿՐԾՔԱԳԵՂՁԻ ՔԱՂՑԿԵՂԻ ՍՔՐԻՆԻՆԳԸ

Սքրինինգը նախատեսում է կրծքագեղձի քաղցկեղի ախտանշաններ, գանգատներ չունեցող, սակայն կրծքագեղձի քաղցկեղի ռիսկի տարիքային խմբին պատկանող կանանց անվճար մամոգրաֆիկ հետազոտություն: Սքրինինգի նպատակն է հիվանդությունը բացահայտել զարգացման վաղ փուլում, ինչը բարձրացնում է կրծքագեղձի քաղցկեղից լիովին բուժվելու հավանականությունը:

ՀՀ -ՈՒՄ ԿՐԾՔԱԳԵՂՁԻ ՔԱՂՑԿԵՂԻ ՄԱՄՈԳՐԱՖԻԿ ՍՔՐԻՆԻՆԳԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Սքրինինգային ծրագրին կարող են մասնակցել 45-68 տարեկան ՀՀ քաղաքացի հանդիսացող կանայք, որոնք պատկանում են բնակչության հետևյալ խմբերին՝

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԽՄԲԵՐ

1. ընտանեկան նպաստի համակարգում ընդգրկված 28.01 և ավելի բարձր անապահովության միավոր ունեցող նպաստառուներ կամ «Պետական նպաստների մասին» օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված կարգով ընտանիքի մեկ հաշվարկային անդամի ամսական եկամտի չափն անապահովության նպաստ ստանալու իրավունք տվող սահմանային շեմի 130 տոկոսի արժեքից ցածր ամսական եկամուտ ունեցող և ընտանիքի անապահովության գնահատման կարգով սոցիալապես անապահով ճանաչված ընտանիքի անդամներ.

2. հաշմանդամություն ունեցող անձինք՝ ֆունկցիոնալության խորն աստիճանի սահմանափակումով, ինչպես նաև 1-ին խմբի հաշմանդամություն ունեցող անձինք.

3. հաշմանդամություն ունեցող անձինք՝ ֆունկցիոնալության ծանր աստիճանի սահմանափակումով, ինչպես նաև 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձինք.

4. հաշմանդամություն ունեցող անձինք՝ ֆունկցիոնալության միջին աստիճանի սահմանափակումով, ինչպես նաև 3-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձինք.

5. զինծառայողներ և նրանց հավասարեցված անձինք, նրանց ընտանիքների անդամներ, զինվորական ծառայության ընթացքում ձեռք բերած հիվանդության կամ ստացած վնասվածքի պատճառով զոհված (մահացած) զինծառայողի ընտանիքի անդամներ, երկարամյա ծառայության կամ հաշմանդամության զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող նախկին զինծառայողներ.

6. փրկարարական ծառայողներ և նրանց ընտանիքների անդամներ, կենսաթոշակի անցնելու կապակցությամբ ազատված փրկարարական ծառայողներ, հաշմանդամություն ձեռք բերած փրկարարական ծառայողներ, ծառայության ընթացքում զոհված (մահացած) փրկարարական ծառայողների ընտանիքների անդամներ.

7 բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունների և ժամանակավոր օթևանների շահառուներ.

8 Չեռնոբիլի ատոմակայանի վթարի վերացման աշխատանքների մասնակիցներ.

9 մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթարկված անձինք.

10 ապաստան հայցողներ ու նրանց ընտանիքների անդամներ.

11 Հայաստանի Հանրապետության օլիմպիական և օլիմպիական ընտանիքի մարզաձևերի ազգային հավաքականների անդամներ.

12 Ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայության կողմից Հայաստանի Հանրապետությունում փախստական ճանաչված և ապաստան ստացած, այդ թվում ժամանակավոր պաշտպանություն ստացած անձինք, ինչպես նաև միգրացիայի և քաղաքացիության ծառայության կողմից հավաքագրված և մշակված (բնակչության պետական ռեգիստրի տվյալների հետ նույնականացված՝ 2023 թվականի սեպտեմբերի 19-ից Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի դեմ սանձազերծված ռազմական գործողությունների հետևանքով բռնի տեղահանված անձինք.

13 ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձինք (բռնության դեպքով պայմանավորված՝ անձի առողջական խնդիրների լուծման նպատակով).

14 սոցիալական փաթեթի շահառուներռուները.

Ի ՔԱՅԼ

Անհրաժեշտ է այցելել Ձեր ընտանեկան բժշկին/թերապևտին։

ԻԻ ՔԱՅԼ

Ձեր ընտանեկան բժշկի/թերապևտի մոտ՝

- անցնել կրծքագեղձի զննում,
- հերթագրվել մամոգրաֆիկ անվճար հետազոտություն անցնելու համար,
- ստանալ տեղեկատվական թերթիկներ՝ ինքնազննման վերաբերյալ։

ԻԻԻ ՔԱՅԼ

Իրականացնել մամոգրաֆիկ սքրինինգային հետազոտություն։

ԻՎ ՔԱՅԼ։

Մամոգրաֆիկ հետազոտությունից 5-7 օր հետո կապ հաստատել Ձեր ընտանեկան բժշկի/թերապևտի հետ մամոգրաֆիկ հետազոտության պատասխանը ստանալու համար։ Հետազոտության պատասխանը հնարավոր է ստանալ նաև այլ, օրինակ էլեկտրոնային եղանակով։

Յուրաքանչյուր մամոգրաֆիկ նկար փոխանցվում է հատուկ վերապատրաստում անցած և մամոգրաֆիկ սքրինինգին մասնակցելու համար լիցենզավորված ճառագայթաբանների, որտեղ երկու ճառագայթաբաններ իրարից անկախ քննում են հետազոտության պատկերները։

Ճնշող մեծամասնության դեպքերում կանանց մամոգրաֆիկ հետազոտությունների արդյունքում չեն հայտնաբերվում որևէ անհանգստացնող խնդիրներ։ Սակայն փոքր տոկոս դեպքերում Ձեր տեղամասային բժիշկը կարող է ուղղորդել Ձեզ մասնագիտացված կենտրոն լրահետազոտություններ անցկացնելու նպատակով։ Նման ուղեգիր ստանալը ամենևին չի նշանակում, որ Ձեր կրծքագեղձում հստակ գտել են վտանգավոր գոյացություն։ Լրահետազոտությունները իրենից ենթադրում են կրկնակի շերտավոր մամոգրաֆիա, կրծքագեղձերի ուլտրաձայնային հետազոտություն, անհրաժեշտության դեպքում կասկածելի օջախի բիոպսիա հյուսվածաբանական և իմունոհիստոքիմիական հետազոտություններ։ Կրծքագեղձի քաղցկեղի սքրինիգի ընթացքում իրականացվելիք լրահետազոտությունները իրականացվում են անվճար։

Սքրինինգային հետազոտությանը անձը կարող է հերթագրվել նաև ինքնուրույն, առանց ընտանեկան բժշկին այցելելու Արմեդ հավելվածում՝

https://armed.am/am/auth/loginnew

ԻՆՉՊԵՍ Է ԿԱՏԱՐՎՈՒՄ ՄԱՄՈԳՐԱՖԻԱՆ

Ամբողջ գործընթացը տևում է միջինը 10-15 րոպե:

Յուրաքանչյուր կուրծքը հետազոտվում է առանձին:

Կրծքագեղձը տեղադրվում է երկու թիթեղների միջև, որոնցից մեկն անշարժացնում է կուրծքը, իսկ երկրորդը գրանցում է պատկերը:

Կրծքագեղձի թեթևակի սեղմումը հնարավորություն է տալիս ավելի հստակ պատկեր ստանալ, որն արտացոլում է հյուսվածքների ամբողջ կառուցվածքը:

Կանանց մոտ մի քանի վայրկյանով կարող է առաջանալ անհարմարություն, աննշան ցավ, կարմրություն, երբեմն կապտուկներ, սակայն այդ ամենն որևէ բուժում կամ հատուկ խնամք չի պահանջում:

ՀՀ պետական բյուջեի միջոցների շրջանակում կրծքագեղձի վիրահատական և քիմիաթերապևտիկ բուժման ծառայություններից 2022-2024թթ. ընթացքում դեպքերի տարիքային բաշխվածությունը







ՀՀ պետական բյուջեի միջոցների շրջանակում կրծքագեղձի քիմիաթերապևտիկ ու վիրաբուժական բուժման ծառայությունների ուղեգրումների աշխարհագրությունը.

Մարզ	2022	2023	2024
Արագածոտն	3%	3%	3%
Արարատ	7%	7%	6%
Արմավիր	7%	6%	6%
Գեղարքունիք	4%	3%	5%
Երևան	50%	55%	52%
Լոռի	7%	5%	7%
Կոտայք	8%	7%	9%
Շիրակ	5%	6%	7%
Սյունիք	2%	4%	2%
Վայոց Ձոր	1%	1%	1%
Տավուշ	4%	3%	2%
Ընդամենը	100%	100%	100%



Մեկ դեպքի հաշվով միջին ծախսն ունի հետևյալ պատկերը.

	2022	2023	2024
Ընդամենը ծախս	374 224	243 021	225 996
Վիրաբուժական միջամտությունների համար ծախսերը	374 619	330 175	324 261
Քիմիաթերապևիկ ծառայությունների միջին ծախսը		100 000	100 000

Ռուցքաբանական հիվանդությունների վիրահատական բժշկական օգնության ծառայությունների շրջանակում կրծքագեղձի վիրահատական միջամտությունների, այդ թվում մասնակի կամ ամբողջական հեռացման դեպքերը ըստ տարիքային բաշխման.



Կրծքագեղձի քաղցկեղի տրաստուզումաբ դեղով բուժման ծրագրի շրջանակում քիմիաթերապևտիկ բուժման դեպքերի վիճակագրությունը ներկայացվում է ստորև.



Առողջապահության Նախարարություն
Ministry of Health of the Republic of Armenia

Ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

Ծրագրի մասին տեղեկատվություն

https://moh.am/#1/7904

Փաստաթուղթը մշակվել է ԵՄ-ն հանուն գենդերային հավասարության բարեփոխումների օգնության պատուհան ծրագրի շրջանակներում՝ Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ և NIRAS-ի կողմից։ Դրա բովանդակությունը պատկանում է NIRAS-ին և կարող է չարտացոլել Եվրամիության տեսակետները։